«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Պ Ե Տ

«22» դեկտեմբերի 2014թ.

Հաստատում եմ

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետի ժամանակավոր պաշտոնակատար

_____ Հ. Թունյան

ԳԲԽ-44/14 բողոքը քննող

հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Էս Զեթ Ֆարմա» ՍՊԸ-ի 04.12.2014թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «Էս Զեթ ֆարմա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին 04.12.2014թ. ներկայացրած բողոքով «Էս Զեթ ֆարմա» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) հայտնել է, որ 28.11.2014թ. «Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան» ՊՈԱԿ-ի կողմից քիմիական նյութեր ձեռքբերելու նպատակով կազմակերպվել է «ՇՀԱՊՁԲ-11/15-1-

2(ԵՊԲՀ) ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Էս Զեթ ֆարմա» ՍՊԸ-ն և «Արմենֆարմ» ՍՊԸ-ն:

Ընկերությունը հայտնել է, որ Ընթացակարգով գնային առաջարկ է ներկայացրել հետևյալ ապրանքների համար՝

1. Միկրո 10 էնզիմ խտանյութ 1լ., համարժեք՝ Անիոզիմ ԴԴ1 խտանյութ 1լ.
2. Միկրո 10 պլուս խտանյութ 1լ., համարժեք՝ Հեքսանիոս Գ+Ռ խտանյութ 1լ.
3. Դերմոկոլ գել նյու պոմպով 1լ., համարժեք՝ Անիոսժել 85ՆՊՍ 1լ.
4. Դենտասեպտ ուլտրա 5լ., համարժեք՝ Ստերանիոս 20% 500մլ. խտանյութ
5. Ունիսեպտա օլլ սուրֆեյս խտանյութ 1% 2,5լ., համարժեք՝ Սուրֆանիոս խտանյութ 1լ.
6. Ունիսեպտա ֆոմ 750մլ համարժեք Անջոս ԴԴՍՀ 750մլ
7. Դերմոկոլ ուոշ 1լ. պոմպով, համարժեք՝ Սավո-Դու 1լ.
8. Ունիսեպտա պլուս սփրեյ 750մլ., համարժեք՝ Անիոսկին 0,5լ.

Ընթացակարգի բոլոր չափաբաժինների մասով հաղթող է ճանաչվել «ԱրմենՖարմ» ՍՊԸ-ն:

Ընկերության կարծիքով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել սուբյեկտիվ, որը հիմնված չէ ՀՀ իրավական ակտերի և պետական միջոցների արդյունավետ օգտագործման սկզբունքի հիման վրա, քանի որ «Էս Զեթ ֆարմա» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է անհամեմատ ցածր գին, մասնավորապես՝ «Արմենֆարմ» ՍՊԸ-ն Անիոսժել 85ՆՊՍ 1լ.-ի համար առաջարկել է Դերմոկոլ գել նյու պոմպով 1լ., համարժեք՝ Անիոսժել 85ՆՊՍ 1լ., Դենտասեպտ ուլտրա 5լ., համարժեք՝ Ստերանիոս 20% 500 մլ. խտանյութ, Ունիսեպտա ֆոմ 750մլ., համարժեք՝ Անջոս ԴԴՍՀ 750մլ., Ունիսեպտա պլուս սփրեյ 750մլ., համարժեք՝ Անիոսկին 0,5լ. ապրանքների համար «Էս Զեթ ֆարմա» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է անհամեմատ ցածր գին:

Ընկերությունը բողոքում նշել է, որ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտով ներկայացրած գնային առաջարկով «Արմենֆարմ» ՍՊԸ-ն՝

1) «Անիսժել 85ՆՊՍ 1լ.» նյութն առաջարկել է մատակարարել 20160000 ՀՀ դրամով, իսկ Ընկերությունը՝ որպես համարժեք «Դերմոկոլ գել նյու պոմպով 1լ.» նյութը՝ 6735000 ՀՀ դրամով,

2) «Ստերանիոս 20% 500մլ.» խտանյութն առաջարկել է մատակարարել 2496000 ՀՀ դրամով, իսկ Ընկերությունը՝ որպես համարժեք «Դենտադեպտուլտրա 5լ.» նյութը՝ 1520000 ՀՀ դրամով,

3) «Անիոս ԴԴՍՀ 750մլ.» նյութն առաջարկել է մատակարարել 2304000 ՀՀ դրամով, իսկ Ընկերությունը՝ որպես համարժեք «Ունիսեպտա ֆոմ 750մլ.» նյութը՝ 568500 ՀՀ դրամով:

4) «Անիոսկին 0,5լ.» նյութն առաջարկել է մատակարարել 1700000 ՀՀ դրամով, իսկ Ընկերությունը՝ որպես համարժեք «Ունիսեպտա պլուս սփրեյ 750մլ.» նյութը՝ 1325000 ՀՀ դրամով:

Ընկերությունը ներկայացրած բողոքով հայտնել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը «Էս Զեթ ֆարմա» ՍՊԸ-ի հայտը մերժել է, քանի որ վերը նշված ապրանքների համար բացակայել են ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված միջոցների կիրառման մեթոդական հրահանգները, ինչպես նաև այն, որ Ընկերության կողմից տվյալ չափաբաժիններով ներկայացրած համարժեք նյութերն արտադրված են Anios International Dental Group-ի կողմից, ինչն անհնար է դարձնում նյութերի արտադրության և օգտագործման օպտիմալությունը:

Ընկերությունը գտնում է, որ վերոնշյալ հիմնավորումը չէր կարող հիմք հանդիսանալ հայտը մերժելու համար, քանի որ ներկայացված ապրանքների համար մեթոդական հրահանգները հնարավոր է ներկայացնել նաև ապրանքներ մատակարարելիս, իսկ այն, որ նյութերը ենթակա են օգտագործման միայն ստոմոտոլոգիայում և հնարավոր չէ դրանք օգտագործել բժշկական մնացած ոլորտներում, զուրկ է իրավական կամ բժշկական հիմնավորումից:

Ընկերությունը գտնում է, որ խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված պահանջները, ըստ որի՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի «Արմենֆարմ» ՍՊԸ-ին Ընթացակարգի որպես ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը՝ «Անիսժել 85ՆՊՍ 1լ.», «Ստերանիոս 20% 500մլ.», «Անիոս ԴԴՍՀ 750մլ.» և «Անիոսկին 0,5լ.» դեղերի մասով, ճանաչել անվավեր:

«Էս Զեթ ֆարմա» ՍՊԸ-ի ներկայացուցիչները, մասնակցելով Կենտրոնում 10.12.2014թ. ժամը 16:00-ին կազմակերպված քննարկմանը և լսելով Պատվիրատուի կողմից ներկայացված առարկությունները, խնդրել են նիստը հետաձգել՝ Ընկերության կողմից առաջարկված նյութերի Ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանելու վերաբերյալ ապացույցներ ներկայացնելու համար: Սակայն պատշաճ ծանուցված լինելով քննարկման տեղի և ժամի մասին, չեն ներկայացել Կենտրոնում 17.12.2014թ.. ժամը 16:30-ին կազմակերպված քննարկմանն ու չեն ներկայացրել ապացույցներ:

2. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները

«Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան» ՊՈԱԿ-ը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 10.12.2014թ. N 09/3498 գրությամբ «Էս Զեթ ֆարմա» ՍՊԸ-ի ներկայացրած բողոքի վերաբերյալ հայտնել է, որ 13.11.2014թ. Պատվիրատուի կողմից կազմակերպվել է «ՇՀԱՊՁԲ-11/15-1-2(ԵՊԲՀ) ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգ: Ընթացակարգը կազմակերպվել է «Հերացու թիվ 1» և «Մուրացան» հիվանդանոցային համալիրների զեկուցագրերի հիման վրա: Գնման առարկա է հանդիսացել հիվանդանոցային համալիրների համար անհրաժեշտ ՀՀ ԱՆ գործող սանիտարահամաճարակային կանոններին և նորմերին համապատասխանող, տարբեր բժշկական ոլորտներում (վիրահատարաններ, վիրակապարաններ, վիրաբուժական պրակտիկա, մանկաբուժական պրակտիկա, նորածնային ռեանիմացիայում կյուվեզների ախտահանում, բոլոր տեսակի մակերեսներ, մանիպուլյացիոն

սենյակներ, հիվանդասենյակներ, բոլոր բժշկական օգնություն սպասարկող ոլորտներ) օգտագործվող ախտահանիչ նյութերը:

Պատվիրատուն հայտնել է, որ Հրավերով պահանջվող նյութերի վերաբերյալ գործում է ՀՀ ԱՆ կողմից հաստատված միջոցների կիրառման մասին մեթոդական հրահանգը (ՀՀ ԱՆ 28.03.2013թ. թիվ 2594-Ա, ՀՀ ԱՆ 24.12.2009թ. թիվ 2065-Ա հրամաններ), հետևաբար՝ նյութերը պետք է պարտադիր ունենան պատրաստման և օգտագործման վերաբերյալ հաստատված մեթոդական հրահանգներ, քանի որ նրանց բացակայության դեպքում պատրաստվող լուծույթների կոնցենտրացիաների աննշան շեղումը կարող է հանգեցնել անդառնալի հետևանքների առաջացման:

Վերոնշյալ նյութերը վերջին տարիների ընթացքում հաջողությամբ պատրաստվում և օգտագործվում են «Հերացի» և «Մուրացան» հիվանդանոցային կլինիկաներում՝ ՀՀ ԱՆ մեթոդական ցուցումներին համապատասխան:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել թվով 2 մասնակից՝ «Էս Զեթ Ֆարմա» ՍՊԸ-ն և «Արմենֆարմ» ՍՊԸ-ն:

«Արմենֆարմ» ՍՊԸ-ի ներկայացրած ֆրանսիական «Anios» արտադրող ընկերության ախտահանիչ նյութերը բոլոր ցուցանիշներով համապատասխանում են հրավերով սահմանված տեխնիկական պահանջներին, որոնց վերաբերյալ առկա է ՀՀ ԱՆ կողմից հաստատված միջոցների կիրառման մասին մեթոդական հրահանգներ:

«Էս Զեթ Ֆարմա» ՍՊԸ-ն պահանջվող ախտահանիչ նյութերը ներկայացրել է համարժեք տարբերակներով: Այսպես, «Անիոզիմ ԴԴ1 խտանյութ 1լ»-ին համարժեք՝ «Միկրո 10 Էնզիմ խտանյութ 1լ», «Հեքսանիոս Գ+Ռ խտանյութ 1լ»-ին համարժեք՝ «Միկրո 10 պլուս խտանյութ 1լ», «Անիոսժել 85 ՆՊՍ 1լ»-ին համարժեք՝ «Դերմոկոլ գել նյու պոմպով 1լ», «Ստերանիոս 20% 500մլ»-ին համարժեք՝ «Դենտասեպտ ուլտրա 5լ», «Սուրֆանիոս խտանյութ 1լ»-ին համարժեք՝ «Ունիսեպտա օլլ սուրֆեյս խտանյութ 1% 2.5լ», «Անիոս ԴԴՍՀ 750մլ»-ին համարժեք՝ «Ունիսեպտա ֆոմ 750մլ», «Սավոն-Դու 1լ»-ին համարժեք՝ «Դերմոկոլ ուոշ 1լ պոմպով», «Անիոսկին 0,5լ»-ին համարժեք՝ «Ունիսեպտա պլուս սփրեյ 750մլ»:

Յուրաքանչյուր համարժեք նյութի վերաբերյալ «Էս Զեթ Ֆարմա» ՍՊԸ-ի կողմից փաթեթով ներկայացվել են տեղեկատվական բրոշյուրներ, որոնցում նշված է եղել նյութերի համառոտ նկարագրությունը և արտադրող կազմակերպության տվյալները

/բրոշյուրները կցվել են գրությանը/, որտեղից պարզ երևում է, որ նյութերը արտադրվել են նույն ֆրանսիական «Anios» արտադրող ընկերության կողմից:

Հաշվի առնելով «Էս Զեթ Ֆարմա» ՍՊԸ-ի և «Արմենֆարմ» ՍՊԸ-ի ներկայացրած նյութերի գնային տարբերությունը, նույն արտադրողի կողմից հիվանդանոցային ոլորտում օգտագործվող նյութերի տարբեր բրենդային անվանումներով նյութերի առկայությունը, ինչպես նաև պահանջվող նյութերի կիրառման ոլորտի ստրատեգիական նշանակությունը՝ համապատասխան մասնագետների կողմից անց է կացվել մանրամասն ուսումնասիրություն երկու մասնակիցների կողմից առաջարկվող նյութերի գնային ու տեխնիկական համապատասխանության վերաբերյալ ու տրվել է եզրակացություն՝ Ընթացակարգի հրավերով պահանջվող և «Էս Զեթ Ֆարմա» ՍՊԸ-ի կողմից որպես համարժեք առաջարկվող ախտահանիչ նյութերի վերաբերյալ հետևյալ համեմատական աղյուսակով՝

Չափաբաժնի համար	Պահանջվող նյութերի անվանումները	«Էս Զեթ Ֆարմա» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող նյութերի անվանումը	Ուսումնասիրությունների արդյունքում արձանագրված անհամապատասխանություն-ների ցանկ
1	Անիոզիմ ԴԴ1 1լ խտանյութ ՀՀ ԱՆ 28.09.2013 № 2594 - Ա հրաման*	Միկրո 10 Էնզիմ 1լ	Միկրո 10 Էնզիմ 1լ խտանյութի բաղադրությունը չի համապատասխանում Անիոզիմ ԴԴ1-խտանյութի բաղադրությանը: Անիոզիմ ԴԴ1-ը օրիգինալ պրեպարատ է, իր մեջ առկա էնզիմները ծառայում են որպես կատալիզատոր՝ չեն քայքայվում ախտահանման ընթացքում և կարող են ծառայել բազմակի ախտահանման համար 3 օրվա ընթացքում: Անիոզիմ ԴԴ1-ի ախտահանիչ հատկությամբ ՉԱՄ-ը 5-րդ սերնդի է, որի դեպքում նաև հակակոռոզիոն հավելումներ չեն օգտագործվում: Միկրո 10 Էնզիմ 1լ-ը խտանյութ է, որից

			ախտահանման և նախամանրէազերծումային մշակում կատարելու համար պետք է պատրաստել 2% աշխատանքային լուծույթ 125լ ծավալով, որի ինչպես օգագործված, այնպես էլ չօգտագործված աշխատանքային լուծույթի պիտանելիությունը 1 օր է: Անիոզիմ ԴԴ1 1լ խտանյութից ախտահանման և նախամանրէազերծումային մշակում կատարելու համար պատրաստվում է 0,5% 200լ աշխատանքային լուծույթ, որի պիտանելիությունը 3օր է ինչպես օգտագործված, այնպես էլ չօգտագործված վիճակում: Ախտահանիչ նյութի հիմնական պահանջներից է աշխատանքային լուծույթի անվտանգությունը, որը տեխնոլոգիական լուծումների արդյունք է՝ ազդող նյութերի մինիմալ կոնցենտրացիա գումարած մաքսիմալ էֆեկտիվություն: Տվյալ դեպքում Միկրո 10 Էնզիմ 2% աշխատանքային լուծույթի կոնցենտրացիան 4 անգամ գերազանցում է Անիոզիմ ԴԴ1-ի 0,5% աշխատանքային լուծույթի կոնցենտրացիան: Չունի ՀՀ ԱՆ համապատասխան հրաման:
2	Հեքսանիոս 1լ խտանյութ ՀՀ ԱՆ 28.09.2013 № 2594 - Ա հրաման*	Միկրո 10+ 1լ	Չի համապատասխանում բաղադրությամբ: Միկրո 10+ 1լ - 2% 125լ աշխատանքային լուծույթ է պատրաստվում, իսկ Հեքսանիոս1լ - խտանյութի 0,5%-ng 200լ: Միկրո 10+ 1լ - 2% աշխատանքային լուծույթի

			կոնցենտրացիան 4 անգամ գերազանցում է Հեքսանիոս1լ խտանյութի 0,5% աշխատանքային լուծույթի կոնցենտրացիան: Միկրո 10+ 1լ - 2% պարունակում է մեկ ախտահանիչ կոմպոնենտ, որը բավարար չէ, որպեսզի միկրոֆլորան ձեռք չբերի կայունություն պրեպարատի նկատմամբ: Չունի ՀՀ ԱՆ համապատասխան հրաման:
3	Անիոսժել 1լ հրաման № 2065 Ա 24 Դեկտեմբեր 2009 թ. ՀՀ ԱՆ 18.08.2011 № 7 հրաման*	Դերմոկոլ գել Նյու 1լ	Անիոսժելը օրիգինալ պրեպարատ է: Անիոսժել ախտահանիչ նյութը ի տարբերություն Դերմոկոլ գելի չունի հոտը բարելավող հավելումներ և ներկանյութեր: Անիոսժելը իրենից ներկայացնում է դենատուրացված էթանոլ, ոչ թե սովորական էթիլ սպիրտ ինչպես Դերմոկոլ գելը: Անիոսժելը նախատեսված է վիրաբուժական և հիգենիկ մշակումների համար: Անիոսժել ախտահանիչ նյութի հետ կապված գրանցման գործընթացում էֆեկտիվության հետ կապված կատարված փորձաքննությունները տվել են 100% -ոց արդյունք, որը կարևորագույն չափանիշ է ախտահանիչ նյութի համար: Այն արդյունք է նյութի պատրաստման օրիգինալ տեխնոլոգիայի: Նմանատիպ արդյունքի բացակայությունը հնարավորություն չի տալիս կատարել լիարժեք համեմատություն: Հայկական շուկայում առկա են էթիլ սպիրտի հիմքի վրա այլ

			ախտահանիչ նյութեր, որոնք չունեն պրոլոնգ ազդեցություն և չեն ապահովում 100% արդյունք: Դերմոկոլ գելը չունի 1լ-ոց պոմպայով տարողություն,ունի միայն 500մլ-ոց, չունի պրոլոնգ ազդեցություն: Չունի ՀՀ ԱՆ համապատասխան հրաման:
4	Ստերանիոս 20% 0,5լ խտանյութ ՀՀ ԱՆ 28.09.2013 № 2594 - Ա հրաման*	Դենտասեպտ ուլտրա 5լ	Դենտասեպտ ուլտրա 5լ-ը խտանյութ չէ և հնարավորություն չի տալիս օգտագործել նյութը մաս-մաս՝ ըստ անհրաժեշտության: Ամբողջ 5լ -ի պիտանելիությունը սպառվում է 30 օրում, բացելու օրվանից հաշված: Իսկ Ստերանիոս 20% 0,5լ խտանյութից կարելի է պատրաստել ինչպես 1%-ոց, այնպես էլ 2 %-ոց գլյուտարալդեհիդի պարունակությամբ աշխատանքային լուծույթ անհրաժեշտ ծավալի: Աշխատանքային լուծույթը պիտանի է 30 օր թեստ զոլերի հսկողությամբ: Դենտասեպտ ուլտրա 5լ-ը չունի ՀՀ ԱՆ համապատասխան հրաման:
6	Սուրֆանիոս 1լ խտանյութ ՀՀ ԱՆ 28.09.2013 № 2594 - Ա հրաման*	Ունիսեպտա օլլ սուրֆեյսիս խտանյութ 1% 2,5լ	Ունիսեպտա օլլ սուրֆեյսիս խտանյութ 1% 2,5լ չորս անգամ գերազանցում է նյութի աշխատանքային լուծույթի կոնցենտրացիան ի տարբերություն Սուրֆանիոս խտանյութի 0,25%: Չի համապատասխանում բաղադրությունը, չունի ՀՀ ԱՆ համապատասխան

			հրաման:
7	Անիոս ԴԴՍՀ 750մլ ՀՀ ԱՆ 28.09.2013 № 2594 - Ա հրաման*	Ունիսեպտա ֆոմ 750մլ	Ունիսեպտա ֆոամ 750մլ նախատեսված չէ կուվեզների ախտահանման համար, չունի կիրառման այնպիսի լայն սպեկտոր, ինչպես Անիոս ԴԴՍՀ-ը: Ստուգված չէ համատեղելիությունը մի շարք մատերիալների հետ, ինչպես Անիոս ԴԴՍՀ 750մլ: Բաղադրությամբ չի համապատասխանում տրված պահանջին: Չունի ՀՀ ԱՆ համապատասխան հրաման:
8	Սավոն Դու 1լ	Դերմոկոլ ուոշ 1լ	Դերմոկոլ ուոշ 1լ չի համապատասխանում բաղադրությամբ: Դերմոկոլ ուոշ 1լ -ը օճառ չպարունակող լոսյոն է: Սավոն Դու-ն հեղուկ, բակտերիոստատիկ և ֆունգոստատիկ հատկությամբ օճառ է բնական ճարպաթթուների հիմքի վրա, որը նախատեսված է վիրաբուժական մշակումից առաջ ձեռքերի լվացման համար:
10	Անիոսկին 0,5լ	Ունիսեպտա պլյուս սփրեյ 750 մլ	Անիոսկին - նախատեսված է մաշկի, վիրահատական դաշտի մշակման համար, իսկ Ունիսեպտա պլյուս սփրեյ 750 մլ նախատեսված չէ մաշկի, վիրահատական դաշտի մշակման համար: (Նախատեսված է սարքավորումների արտաքին մակերեսների ախտահանման համար:)

Համաձայն ՀՀ ԱՆ գործող սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի (№ 34-Ն 17.12.2010թ., 27.03.2009թ. ՍԿ 3.1.6-011-09, 8.12.2011թ. № 25 Ն №3.1.1-024-2011,

29.12.2008թ. №21-Ն №230, 20.10.2009թ. №03Ն)՝ բուժկանխարգելիչ կազմակերպություններում օգտագործվող ախտահանիչ նյութը պետք է ունենա ՀՀ ԱՆ կողմից օգտագործման համապատասխան թույլտվություն և մեթոդական հրահանգ:

Վերը նշված եզրակացությունը 2014թ. նոյեմբերի 21-ին տրամադրել է «Էս Զեթ Ֆարմա» ՍՊԸ-ին և «Արմենֆարմ» ՍՊԸ-ին և, հաշվի առնելով 28.11.2014թ. նշանակված ՇՀԱՊՁԲ-11/15-1-2-(ԵՊԲՀ) ծածկագրով ընթացակարգի ամփոփիչ նիստը, խնդրել է սեղմ ժամկետում ներկայացնել գրավոր կարծիք տրված եզրակացության վերաբերյալ, որին ի պատասխան, «Արմենֆարմ» ՍՊԸ-ն իր 24.11.2014թ. թիվ 24/11-1 գրությանը կից ներկայացրել է «Anios» արտադրող ընկերության պաշտոնական գրությունը, որում նշվել է, որ «Էս Զեթ Ֆարմա» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող նյութերն արտադրված են «Unident Anios Internetional Dental Group»-ի կողմից և օգտագործվում են միայն ստոմոտոլոգիայում, այն դեպքում, երբ Ընթացակարգի հրավերին կից տեխնիկական բնութագրով պահանջվող նյութերը նախատեսված են օգտագործման բոլոր բժշկական ոլորտներում, ինչով և բացատրվում է նույն արտադրողի կողմից ախտահանիչների առկա գնային տարբերությունը: «Էս Զեթ Ֆարմա» ՍՊԸ-ից 28.11.2014թ. ժամը 10:45-ին ստացվել է գրություն, որով ընկերությունը կապված Եվրոպայում տոների հետ, ինչպես նաև ՀՀ առողջապահության նախարարին ուղղված անհայտ գրության պատասխանի չստանալու հետևանքով խնդրել է հետաձգել 28.11.2014թ. 12:00-ին նշանակված նիստը 7 օրով: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն ամփոփիչ նիստի հետաձգումը համարել է չհիմնավորված:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դրույթը, ըստ որի՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով, և «Էս Զեթ Ֆարմա» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող նյութերի անհամապատասխանության վերաբերյալ տրված մասնագիտական եզրակացությունը, ՀՀ առողջապահության նախարարի N 03-Ն և N 21-Ն հրամանները, «Էս Զեթ Ֆարմա» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող նյութերի վերաբերյալ ՀՀ ԱՆ մեթոդական հրահանգների բացակայությունը, ինչպես նաև ֆրանսիական «Anios» արտադրող ընկերության պաշտոնական գրությունը՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել՝ մերժել «Էս Զեթ Ֆարմա» ՍՊԸ-ի գնային առաջարկը:

Հաշվի առնելով ներկայացված պարզաբանումներն ու փաստարկները, Պատվիրատուն առաջարկել է բողոքի քննության ժամանակ նշված հանգամանքները դարձնել քննարկման առարկայի առանցք, ինչը հիմք կհանդիսանա ներկայացված բողոքի մերժման համար:

Պատվիրատուի ներկայացուցիչները, մասնակցելով Կենտրոնում 10.12.2014թ. ժամը 16:00-ին և 17.12.2014թ.. ժամը 16:30-ին կազմակերպված քննարկումներին, պնդեցին 10.12.2014թ. N 09/3498 գրությամբ ներկայացված առարկությունները և խնդրեցին բողոքը մերժել՝ այն անհիմն լինելու պատճառաբանությամբ:

3. ԳԲԽ-44/14 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Էս Զեթ Ֆարմա» ՍՊԸ-ի 04.12.2014թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, Պատվիրատուի 10.12.2014թ. N 09/3498 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

ԳԲԽ-44/14 բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան» ՊՈԱԿ-ի կողմից քիմիկական նյութեր ձեռքբերելու նպատակով կազմակերպվել է «ՇՀԱՊՁԲ-11/15-1-2(ԵՊԲՀ) ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Էս Զեթ Ֆարմա» ՍՊԸ-ն և «Արմենֆարմ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի հրավերով գնման առարկա է հանդիսացել տարբեր բժշկական ոլորտներում օգտագործվող ախտահանիչ նյութերը:

3. Ընթացակարգի հրավերին կից N 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագրի համաձայն՝

- 3-րդ չափաբաժնով սահմանվել է քիմիական նյութի անվանումը՝ «Անիոսժել 85 ՆՓՍ 1լ.» կամ համարժեք, բնութագիրը՝ հեղուկ, հիպոալերգիկ, տիքսոտրոպիկ գել (մաշկի վրա վեր է ածվում հեղուկի և թափանցում է անգամ մաշկի միկրոճեղքերի մեջ): Դենա-

տուրացված էթանոլ 70,00±5%, ինչպես նաև հարթեցնող և փափկեցնող հավելումներ նախատեսված ձեռքերի մաշկի խնամքի համար: Տոքսիկ չէ, չունի տեղային գրգռիչ, մաշկա-ռեզորբտիվ և գերզգայունացնող ազդեցություններ: Նյութն ունի մանրէասպան ազդեցություն, գրամբացասական և գրամդրական մանրէների (այդ թվում ներհի-վանդանոցային վարակների հարուցիչների, տուբերկուլյոզի միկրո-բակտերիաների), սնկերի (ներառյալ Կանդիդա ցեղի խմորասնկեր), վիրուսների (արտաընդերային հեպատիտներ, ՄԻԱՎ-վարակ), (H5N1), (A H1N1) նկատմամբ:

Հակամանրէային երկարացված ազդեցությունը պահպանվում է 3 ժամվա ընթացքում: Տարան դոզավորող պոմպով է 1 սեղմումը 1,5մլ., 3մլ. մեկ հիգենիկ մշակումը-30վրկ., 6մլ. մեկ վիրաբուժական մշակումը-90 վրկ., մշակումից հետո ձեռքերի լվացում չի պահանջվում, 1լ. նախատեսված է 333 հիգենիկ և 167 վիրաբուժական մշակման համար, չափման միավորը՝ ֆլակոն:

- 4-րդ չափաբաժնով սահմանվել է քիմիական նյութի անվանումը՝ «Ստերանոս 20% 500մլ.» խտանյութ կամ համարժեք, բնութագիրը՝ Գլուտարալդեհիդ (20%), հակակոռոզիոն հավելումներ, կայունացնող նյութեր և այլ օժանդակ բաղադրամասեր: Աշխատանքային լուծույթը պատրաստվում է 1:9 հարաբերությամբ, հետևաբար 0,5լ. Խտանյութից պատրաստվում է 5լ. աշխատանքային լուծույթ բազմակի օգտագործման համար, որի պիտանելիության ժամկետը 30 օր է, ունի նաև թեստ զոլեր լուծույթի պիտանելիությունը ստուգելու համար: Խտանյութը կարելի է ակտիվացնել ըստ աշխատանքային լուծույթի անհրաժեշտ քանակի, աշխատանքային լուծույթը նախատեսված է բժշկական նշանակության գործիքների, առարկաների, էնդոսկոպների ախտահանման-10ր, բարձր մակարդակի ախտահանման-10ր, մանրէազերծման և սպորազերծման համար-60ր., չափման միավորը՝ ֆլակոն:

- 7-րդ չափաբաժնով սահմանվել է քիմիական նյութի անվանումը՝ «Անիոս ԴԴՍՀ 750մլ.» կամ համարժեք, բնութագիրը՝ աէորազոլ, բաղադրիչ նյութերը՝ N,N-դիդեցիլ-N-մեթիլպոլի (օքսիէթիլ) ամոնիում պրոպիոնատ և ալկիլպրոպիլ-էնդիամինգուանիդին ացետատ, ինչպես նաև օժանդակ և իներտ բաղադրիչներ (պրոպիլ սպիրտ, էթոկսիլացված յուղային սպիրտներ): Ախտահանման էքսպոզիզիան 5 րոպե: Ախտահանիչ նյութը ցուցաբերում է մանրէասպան ազդեցություն գրամդրական և գրամբացասական մանրէների վրա (ներառյալ տուբերկուլյոզի միկրոբակտերիան), վիրուսների (ներառյալ

արտաընդերային հեպատիտների և ՄԻԱՎ-վարակի), սնկերի, այդ թվում կանդիդոզ և դերմատոֆիտիա) վրա: Ախտահանող նյութը չի փոխում մշակվող մակերևույթի որակը և չի առաջացնում թաղանթ: Շնորհիվ նյութի գոլորշիների ցածր զնդելիության չի պահանջվում աշխատանքային օդի նորմավորում, չունի գերզգայունացնող ազդեցություն: Նախատեսված է հիվանդանոցային և արտահիվանդանոցային ձևերով բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում (մանկաբարձական ստացիոնարներում, այդ թվում՝ նեռնատոլոգիայի բաժանմունքներում, ատամնաբուժական կաբինետներում, տարբեր լաբորատորիաներում (կլինիկական, մանրեբանական և այլն), շտաբ օգնության կայաններում և այլն) փոքր մակերես ունեցող առարկաների, սանիտարատեխնիկական սարքավորումների, բժշկական սարքավորումների (այդ թվում՝ կուվեզներ) և այլ մակերեսների ախտահանման և մաքրման համար: Վերակենդանացման և փաթեթավորման սեղանները կարելի է մշակել կուվեզում գտնվող երեխաների ներկայությամբ, չափման միավորը՝ հատ:

- 10-րդ չափաբաժնով սահմանվել է քիմիական նյութի անվանումը՝ «Անիոսկին 0,5լ.» կամ համարժեք, բնութագիրը՝ իզոպրոպիլ սպիրտ, ներկանյութ ՉԱՄ և այլ հավելումներ: «Անիոսկին 0,5լ.» ախտահանիչ նյութը նախատեսված է վիրահատական դաշտի և դոնորների արմնկայինփոսի մաշկի, ինչպես նաև մինչև կատետերիզացիան և հոդերի պունկցիան ինյեկցիոն դաշտի մշակման համար: Ախտահանիչ նյութն օժտված է հակամանրէային ազդեցությամբ, գրամդրական և գրամբացասական բակտերիաների (ներառյալ տուբերկուլյոզի միկոբակտերիաները), վիրուսների (ներառյալ՝ ադենովիրուսները, պոլիոմելիտը, ընդերային և արտաընդե-րային հեպատիտները, հերպեսը ՄԻԱՎ-վարակը և այլն), սնկերի (Կանդիդա, Դերմատոֆիտիա): Ինյեկցիոն դաշտի մշակում՝ մաշկը մշակում են ստերիլ տամպոնով, առատորեն թրջված ախտահանիչ հեղուկով: Մշակումից հետո պահման ժամանակը-15վրկ.: Վիրահատական դաշտի մշակումը կատարվում է կրկնակի՝ ստերիլ թանզիֆե վիրախծուծներով առատորեն թրջված ախտահանիչ նյութով: Մշակումից հետո պահման ժամանակը-2րոպե, չափման միավորը՝ հատ:

4. «Էս Զեթ Ֆարմա» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով 3-րդ չափաբաժնով սահմանված «Անիոսժել 85 ՆՓՍ 1լ.» նյութին որպես համարժեք ապրանք առաջարկել է «Դերմոկոլ գել նյու պոմպով 1լ.» նյութը, 4-րդ չափաբաժնով սահմանված

«Ստերանոս 20% 500մլ.» խտանյութին որպես համարժեք առաջարկել է «Դենտասեպտ ուլտրա 5լ.» նյութը, 7-րդ չափաբաժնով սահմանված «Անիոս ԴԴՍՀ 750մլ.» նյութին համարժեք առաջարկել է «Ունիսեպտա ֆոմ 750մլ.» նյութը, 10-րդ չափաբաժնով սահմանված «Անիոսկին 0,5լ.» նյութին որպես համարժեք առաջարկել է «Ունիսեպտա պլուս սփրեյ 750մլ.» նյութը:

5. Ընկերությունը 3-րդ, 4-րդ, 7-րդ և 10-րդ չափաբաժիններով որպես համարժեք առաջարկած նյութերի վերաբերյալ ներկայացրել է տեղեկատվական բրոշյուրներ (անգլերեն լեզվով), որոնց համաձայն՝ նշված նյութերն արտադրվում են ֆրանսիական «Unident Anios Internetional Dental Group»-ի կողմից և նախատեսված են օգտագործման ատամնաբուժական ոլորտում ախտահանում իրականացնելու համար:

6. «Anios laboratoires» արտադրող ընկերության 21.11.2014թ. թիվ LR/141120/Export գրության համաձայն՝ «Unident Anios Internetional Dental Group»-ը հանդիսանում է «Anios laboratoires» դուստր կազմակերպությունը և նրա կողմից արտադրվող նյութերն օգտագործվում են միայն ստոմոտոլոգիական ոլորտում:

7. Պատվիրատուի «Հերացի» թիվ 1 հիվանդանոցային համալիրի գլխավոր բժիշկ, կլինիկական աշխատանքների կազմակերպման վարչության պետ Կ.Սահակյանի և վիրահատական բլոկի ավագ բուժքույր՝ Ա. Գրիգորյանի, «Մուրացան» հիվանդանոցային համալիրի գլխավոր բժիշկ Բ.Բավեյանի, հիգենիկ և համաճարակային բաժնի պետ՝ Կ.Պողոսյանի, վիրահատական բլոկի ավագ բուժքույր՝ Է.Բագիրովայի և ընդհանուր դեղատան վարիչ՝ Ա.Պետրոսյանի 21.11.2014թ. մասնագիտական եզրակացության համաձայն՝ Ընկերության վերը նշված չափաբաժիններով առաջարկած ախտահանիչ քիմիական նյութերը համարժեք չեն Հրավերով պահանջվող ախտահանիչ նյութերին:

Մասնագիտական եզրակացության համեմատական աղյուսակն ամբողջությամբ արտացոլված է սույն եզրակացության 2-րդ բաժնում (էջ 6-10):

8. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.11.2014թ. ժամը 12:00-ին տեղի ունեցած նիստի N 3 արձանագրության 1.3 կետով կայացրած որոշմամբ մերժվել «Էս Զեթ ֆարմա» ՍՊԸ-ի կողմից որպես համարժեք ներկայացված՝ 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ 6-րդ, 7-րդ, 8-րդ և 10-րդ չափաբաժինների ապրանքատեսակները, քանի որ դրանք ճանաչվել են ոչ համարժեք՝ ըստ մասնագիտական եզրակացության:

4. ԳԲԽ-44/14 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով այլընտրանքային մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից, դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

«Դեղերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի «ա» կետի համաձայն՝ դեղեր են համարվում նաև հականեխիչ միջոցները (անտիսեպտիկներ)՝ վարակիչ և մակաբուծային հիվանդությունների հարուցիչները, ինչպես նաև դրանց փոխանցողներին ոչնչացնող կամ վերացնող միջոցները և վարակազերծիչ միջոցները՝ հակամանրէային ակտիվությամբ օժտված նյութերը, որոնք օգտագործվում են բժշկական նշանակության առարկաների վարակազերծման համար:

ՀՀ առողջապահության նախարարի 16 հուլիսի 2010թ. տրված «Ախտահանման, կրծողասպան և միջատասպան աշխատանքների կազմակերպման, իրականացման և

աշխատողների առողջության պահպանման» ՍՆ N 2.2.5-003-05 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին N 13-Ն հրամանի 125-րդ կետի համաձայն՝ աշխատանքների պլանավորված ծավալին համապատասխան ախտահանիչ միջոցների անհրաժեշտ քանակության հաշվարկման համար ղեկավարվում են Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության հետ համաձայնեցված ախտահանիչ միջոցների հրահանգներով:

Պատվիրատուի կողմից տրամադրվել է ՀՀ առողջապահության նախարարի 28.09.2013թ. թիվ 2594 հրամանով հաստատված Հրավերով պահանջվող ախտահանիչ նյութերի օգտագործման և որակի վերահսկման հրահանգը:

Ընկերության կողմից վերը նշված չափաբաժիններով իր կողմից առաջարկված միջոցների վերաբերյալ հրահանգների փոխարեն ներկայացվել են տեղեկատվական բրոշյուրներ /անգլերեն լեզվով/:

ՀՀ առողջապահության նախարարի 28.09.2013թ. թիվ 2594, 18.08.2011թ. թիվ 7 հրամաններով հաստատված ախտահանիչ նյութերի օգտագործման և որակի վերահսկման մեթոդական հրահանգերի, Ընկերության կողմից ներկայացված տեղեկատվական բրոշյուրների, ինչպես նաև մասնագիտական եզրակացության վերլուծությունից հետևում է, որ «Էս Զեթ ֆարմա» ՍՊԸ-ն առաջարկել է հրավերով պահանջվող գնման առարկային ոչ համարժեք ապրանք, մասնավորապես.

- 3-րդ չափաբաժնով Հրավերով նախատեսված «Անիոսժել 85 ՆՓՍ 1լ.» միջոցը իր մեջ պարունակում է դենատուրացված էթանոլ ազդող նյութը, ունի 1լ. պոմպով տարողություն և նախատեսված է վիրաբույժների ձեռքերի մշակման (վիրահատական կառուցահատվածի բուժքույրերի, մանկաբարձուհիների և այլն), ձեռքերի հիգենիկ մշակման (բուժ օգնություն, բուժաշխատողներ, սոցապահովման հիմնարկությունների աշխատողներ, հանրային սննդի օբյեկտների աշխատողներ և այլն) համար, ունի մանրէասպան ազդեցություն ներհիվանդանոցային վարակների հարուցիչների, տուբերկուլյոզի միկոբակտերիաների, սնկերի, վիրուսների նկատմամբ:

Մինչդեռ, Ընկերության կողմից որպես համարժեք ներկայացված «Դերմոկոլ գել նյու պոմպով 1լ.» միջոցն, ըստ մասնագիտական եզրակացության, չունի նույն ազդող նյութը, այլ սովորական էթիլ սպիրտ է, ունի 500մլ. պոմպով տարողություն: Բացի այդ, վերոհիշյալ ախտահանիչ նյութի վերաբերյալ բացակայում է ՀՀ առողջապահության

նախարարության կողմից հաստատված ախտահանիչ նյութի օգտագործման և որակի վերահսկման մեթոդական հրահանգը:

- 4-րդ չափաբաժնով Հրավերով նախատեսված «Ստերանոս 20% 500մլ.» միջոցը խտանյութ է և որպես ազդող նյութ իր մեջ պարունակում է գլյուտար ալդեհիտ (20%), 0,5լ. խտանյութից պատրաստվում է 5լ. աշխատանքային լուծույթ բազմակի օգտագործման համար, որի պիտանելիության ժամկետը 30 օր է, ունի նաև թեստ զոլեր լուծույթի պիտանելիությունը ստուգելու համար: Խտանյութը կարելի է ակտիվացնել՝ ըստ աշխատանքային լուծույթի անհրաժեշտ քանակի, աշխատանքային լուծույթը նախատեսված է բժշկական նշանակության գործիքների, առարկաների, էնդոսկոպների ախտահանման-10ր, բարձր մակարդակի ախտահանման-10ր, մանրէազերծման և սպորազերծման համար-60ր, աշխատանքային լուծույթի պահպանման ժամկետը՝ 30 օր է:

Մինչդեռ, Ընկերության կողմից որպես համարժեք առաջարկված «Դենտասեպտ ուլտրա 5լ» աշխտահանման միջոցը դեղաձևով տարբերվում է պահանջվող նյութից, քանի որ խտանյութ չէ, ինչի արդյունքում հնարավոր չէ օգտագործել նյութը մաս-մաս՝ ըստ անհրաժեշտության, վերոհիշյալ լուծույթի պիտանելիության ժամկետը սպառվում է 30 օրում: Բացի այդ, վերոհիշյալ ախտահանիչ նյութի վերաբերյալ բացակայում է ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված ախտահանիչ նյութի օգտագործման և որակի վերահսկման մեթոդական հրահանգը:

- 7-րդ չափաբաժնով Հրավերով նախատեսված «Անիոս ԴԴՍՀ 750մլ.» լվացող ախտահանող ազդեցությամբ ախտահանիչ միջոցը նախատեսված է հիվանդանոցային և արտահիվանդանոցային ձևերով բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում (մանկաբարձական ստացիոնարներում, այդ թվում՝ նեոնատոլոգիայի բաժանմունքներում, ատամնաբուժական կաբինետներում, տարբեր լաբորատորիաներում (կլինիկական, մանրեբանական և այլն), շտաբ օգնության կայաններում և այլն) փոքր մակերես ունեցող առարկաների, սանիտարատեխնիկական սարքավորումների, բժշկական սարքավորումների (այդ թվում՝ կուվեզներ) և այլ մակերեսների ախտահանման և մաքրման համար: Վերակենդանացման և փաթեթավորման սեղանները կարելի է մշակել կուվեզում գտնվող երեխաների ներկայությամբ:

Մինչդեռ, Ընկերության կողմից որպես համարժեք առաջարկված «Ունիսեպտա ֆոմ 750մլ.» միջոցն, ըստ մասնագիտական եզրակացության, նախատեսված չէ կուվեզների

ախտահանման համար, իսկ նյութի վերաբերյալ Ընկերության կողմից ներկայացված տեղեկատվական բրոշյուրի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ նյութը կիրառելի է ատամնաբուժական ոլորտում:

• 10-րդ չափաբաժնով Հրավերով նախատեսված «Անիոսկին 0,5լ.» միջոցը նախատեսված է վիրահատական դաշտի և դոնորների արմնկայինփոսի մաշկի համար (մաշկի համար), մինչդեռ, Ընկերության կողմից որպես համարժեք առաջարկված «Ունիսեպտա պլուս սփրեյ 750մլ.» միջոցն, ըստ մասնագիտական եզրակացության, նախատեսված է սարքավորումների արտաքին մակերեսների ախտահանման համար, իսկ նյութի վերաբերյալ ներկայացված տեղեկատվական բրոշյուրի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ նյութը կիրառելի է ատամնաբուժական ոլորտում:

Պարզվել է նաև, որ «Էս Զեթ Ֆարմա» ՍՊԸ-ի առաջարկած նյութերն արտադրվում են «Unident Anios Internetional Dental Group»-ի կողմից և նախատեսված են օգտագործման միայն ստոմոտոլոգիական ոլորտում, մինչդեռ՝ Ընթացակարգի հրավերով պահանջվել է տարբեր բժշկական ոլորտներում (վիրահատարաններ, վիրակապարաններ, վիրաբուժական պրակտիկա, մանկաբուժական պրակտիկա, նորածնային ռեանիմացիայում կյուվեզների ախտահանում, բոլոր տեսակի մակերեսներ, մանիպուլյացիոն սենյակներ, հիվանդասենյակներ, բոլոր բժշկական օգնություն սպասարկող ոլորտներ) օգտագործվող ախտահանիչ նյութեր:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ Պատվիրատուի կողմից չեն խախտվել Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված պահանջները, քանի որ Ընկերության 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ և 10-րդ չափաբաժինների համար որպես համարժեք ներկայացված ապրանքատեսակները չեն համապատասխանել Ընթացակարգի հրավերով նախատեսված ապրանքատեսակների տեխնիկական բնութագրին, իսկ Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բավարար են գնահատվում միայն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը:

Նկատի ունենալով, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.11.2014թ. թիվ 3 արձանագրությամբ «Արմենֆարմ» ՍՊԸ-ին 3-րդ, 4-րդ, 7-րդ և 10-րդ չափաբաժինների համար համապատասխանաբար՝ «Անիոսժել 85ԼՊՍ 1լ», «Ստերանիոս 20% 500մլ», «Անիոս ԴԴՍՀ 750մլ» և «Անիոսկին 0,5լ» դեղերի մասով, որպես 1-ին տեղ զբաղեցնող և ընտրված մասնակից ճանաչելու որոշումն անվավեր ճանաչելու պահանջի

վերաբերյալ «Էս Զեթ ֆարմա» ՍՊԸ-ի 04.12.2014թ. ներկայացրած բողոքն անհիմն է, ուստի առաջարկում ենք այն մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի վարիչ՝ Դ. Դավթյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ԳԲԽ-44/14 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Գրիգորյան